ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ԻՐԱՎԱԲԱՆ

25.09.2014 14:49

Հարգելի՛ իրավաբաններ,
Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA ROLI) հայաստանյան ներկայացուցչությունը պայմանագրային հիմունքներով կարճաժամկետ համագործակցության նպատակով փնտրում է քրեական իրավունքի ոլորտում մասնագիտացած հմուտ իրավաբանի, ով կունենա ստորև նշված որակավորումները և կհամապատասխանի հետևյալ պահանջներին՝
- իրավագիտության մագիստրոսի աստիճան,
- աշխատանքային փորձ իրավունքի բնագավառում հետազոտությունների կատարման և դրամաշնորհային հայտ գրելու ոլորտում,
- հաղորդակցման հմտություններ,
- դրամաշնորհային հայտ գրելու հմտություններ,
- հաշվետվություններ կազմելու հմտություններ,
- հայերեն և անգլերեն լեզվի գերազանց իմացություն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.
• կատարել վերլուծություններ և տրամադրել խորհրդատվություն Հայաստանի իրավական համակարգի, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի, ինչպես նաև դատավարական գործընթացների վերաբերյալ,
• Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA ROLI) հայաստանյան ներկայացուցչության տնօրենի հանձնարարությամբ կատարել ուսումնասիրություններ,
• կազմակերպել և անցկացնել հանդիպումներ հնարավոր դոնորների և գործընկերների հետ դրամաշնորհային հայտեր մշակելու նպատակով,
• մշակել և ներկայացնել դրամաշնորհային հայտեր,
• օգնել դասընթացների և սեմինարների կազմակերպման հարցում,
• Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA ROLI) հայաստանյան ներկայացուցչության տնօրենի հանձնարարությամբ իրականացնել այլ ծրագրեր:

ՎԱՅՐ՝ Երևան, Հայաստան
ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ՝ խնդրում ենք բոլոր հետաքրքրված թեկնածուներին ներկայացնել իրենց ինքնակենսագրությունը հետևյալ հասցեով: alina.yarmaloyan@abaceeli.am. Խնդրում ենք դիմումի մեջ ներկայացնել պաշտոնը, որի համար դիմում եք:

ԴԻՄԵԼՈՒ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ՝ Սեպտեմբերի 27, 2014թ.
ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝ Հոկտեմբերի 15, 2014թ.

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })